Հաստատում եմ
ՀՀ ԳԱԱ ՊԻ տնօրեն
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Ա. Մելքոնյան

ԿԱՐԾԻՔ

ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ «ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ 1902-1921 ԹԹ. ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ» Թ.00.05 «ԿՐՈՆԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վահագն Հարությունյանի ատենախոսությունը նվիրված է հայոց եկեղեցու պատմության կարևոր նվիրապետական կառույցներից մեկին՝ Կիլիկիո հայոց կաթողիկոսության գործունեությանը 1902-1921 թթ. ազգային-քաղաքական գործընթացների համատեքստում: Հայտնի իրողություն է, որ Հայոց ցեղասպանության հետևանքով տարածաշրջանի արաբական երկրները դարձան հայության հոծ հատվածի համար փրկության և գոյապահպանության միջոց: Ավելին, երկար դեգերումներից հետո Լիբանանում հաստատվեց Կիլիկիո կաթողիկոսությունը, որը դարձավ հայ-արաբական սերտ կապերի խորհրդանիշը:

Կիլիկիո հայոց կաթողիկոսության փոխադրումը Լիբանանի Անթիլիաս ավան, հիրավի, պատմական նշանակություն ունեցավ: Գործունեություն ծավալելով արդեն հետցեղասպանության նոր պայմաններում ու միջավայրում՝ այն շարունակեց հավատարիմ մնալ հայությանը՝ խնդիր դնելով առաջնահերթ հոգալ ոչ միայն հարազատ ժողովրդի հոգևոր կարիքները, այլ նաև նրա ազգային-քաղաքական իրավունքները: Հայապահպանությունը դարձավ Սահակ Բ Խապայան հոգևորական գործչի դեռևս մինչ այդ ծավալած բեղուն աշխատանքների առանցքը:

Նկատի ունենալով նշված հանգամանքները, անկասկած, Վահագն Հարությունյանի ատենախոսության թեման աչքի է ընկնում բարձրացված հարցերի արդիականությամբ: Ատենախոսության ժամանակագրական սահմանները ընդգրկում են 1902-1921 թթ. ընկած շրջանը: Դա մի ժամանակաշրջան էր, երբ արևմտահայության և

կիլիկիահայության համար դարձավ ճակատագրական, իսկ մեծ մասամբ ողբերգական: Հայությունը զրկվեց իր բնօրրանից՝ հայրենիքից, որտեղ հազարամյակներ շարունակ արարել էր իր կյանքը, ստեղծել պատմամշակութային կենտրոններ, ինչպիսին էր Սսի կաթողիկոսությունը, որը խորհրդանշում էր Կիլիկիո երբեմնի հայոց պետականությունը:

Ատենախոսությունը շարադրելիս հեղինակը օգտագործել և շրջանառության մեջ է դրել Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերը, Կահիրեի ազգային առաջնորդարանի դիվանի փաստաթղթերը, ՌԴ որոշ արխիվներ և այլն: Օգտագործվել է նաև որոշ տպագիր փաստաթղթերի ժողովածուներ, սփյուռքահայ պարբերականներ, թեմային համապատասխան գրականություն և այլն:

Կառուցվածքային առումով ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, աղբյուրների և գրականության ցանկից ու հավելվածներից: Ընդհանուր ծավալը ներառում է 219 էջ, ևս 32 էջ հավելվածները:

Ներածության մեջ (էջ 3-12) հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, հետազոտության առարկան, նպատակները և խնդիրները, ժամանակագրական շրջանակները, գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին գլուխը վերնագրված է «Պայքար Սսի կաթողիկոսության համար: Սահակ Բ Եղեգցի Խապայանի աթոռակալման առաջին շրջանը (1902-1914 թթ.)» և բաղկացած է 6 ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «Կիլիկիո կաթողիկոսությունը և իր թեմերը XX դարասկզբին» (էջ 13-26) ներկայացվում է Կիլիկիո կաթողիկոսության պատմությունը և թեմական բաժանումները ըստ աշխարհագրական ծավալման:

Երկրորդ ենթագլխում՝ «Պայքար Սսի կաթողիկոսական աթոռի համար (1894-1902 թթ.)» քննարկվում է Մկրտիչ Ա Մարաշցի կաթողիկոսի մահից հետո շուրջ 8 տարի՝ 1894-1902 թթ. Կիլիկիո հայրապետական թափուր մնացած աթոռի շուրջ ծծավալված տարբեր վեճերն ու ապօրինի ձեռնադրությունները: Խոսքը վերաբերում է, հատկապես՝ Գրիգոր եպս. Ալեաթճյանի և Հովհաննես եպս. Գազանճյանի՝ Սսի աթոռի համար ծավալած պայքարին (էջ 26-31):

Երրորդ ենթագլխում՝ «Սահակ Բ Խապայանի՝ որպես Սսի նոր կաթողիկոսի ընտրությունը և օծումը» քննարկվում է 1901թ. նոյեմբերի 29-ին Աղանայում գումարված ընտրական ժողովի ընթացքում կաթողիկոս ընտրված և այնուհետև՝ դեկտեմբերի 13-ին անսպասելիորեն հրաժարական ներկայացրած Գևորգ եպս. Երեցյանի թեկնածությունը: Այնուհետև ատենախոսը ներկայացնում է Սահակ Խապայանի թեկնածության առաջադրումը, 1902 թ. հոկտեմբերի 12-ին կազմակերպված նրա ընտրությունը, նույն թվականի դեկտեմբերի 9-ին հրատարակված ընտրությունների վավերականացման կայսերական հրովարտակը, 1903 թ. ապրիլի 20-ին 12 վարդապետների, 45 քահանաների և բազմաթիվ դպիրների մասնակցությամբ Կիլիկիայի արքայական ավերված պալատի տեղում կառուցված վանքի բակում հանդիսավորությամբ իրականացված նորընտիր կաթողիկոսի օծումը (էջ 31-38):

Չորրորդ ենթագլխում՝ «Սահակ Բ Խապայան կաթողիկոսի գահակալման սկզբնական շրջանը (1902-1909 թթ.)» (էջ 38-52) ատենախոսը քննարկում է մի խումբ հարցեր՝ եզրակացնելով, որ Սահակ Բ Խապայան կաթողիկոսի կառավարման առաջին 6 տարիները բավական ծանր էին ու ոչ հուսադրող, իսկ Մայրավանքը կուտակել էր պարտքեր՝ հայտնվելով աղքատության ճիրաններում: Ստանձնելով կաթողիկոսական աթոռը՝ Սահակ Բ Խապայանը ձեռնամուխ է լինում այդ անհետաձգելի խնդիրների լուծմանը, որը ատենախոսի կարծիքով՝ մասամբ հաջողվեց (էջ 52):

Հիգերորդ ենթագլխում՝ «Մահմեդական անհանդուրժողականության և բռնությունների դրսևորումները 1909 թ. կոտորածների շրջանում՝ Կիլիկիո կաթողիկոսության գործունեության համատեքստում» (էջ 52-73) ատենախոսը ներկայացնում է նված կոտորածները կաթողիկոսության գործունեության լույսի ներքո:

Վեցերորդ ենթագլխում՝ «Կիլիկիո կաթողիկոսության հոգևոր-եկեղեցական կյանքը 1909-1914 թթ.» (էջ 73-92) ատենախոսը հանգամանորեն ներկայացնում է 1909 թ. կոտորածների հետևանքները հայ հոգևորականների հետագա ճակատագրում, կաթողիկոսության դերը անօթևանների խնամատարության և որբախնամ գործունեության գործում, բնակչության և հոգևորականության առջև ծառացած տարագրության և դավանափոխության հարցերը, ինչպես նաև եկեղեցական կյանքի աշխուժացման միտումները, կաթողիկոսությանը ենթակա Թլանի ագարակի

կարգավիճակի հստակեցումը և կաթողիկոսության հարաբերությունները Օսմանյան պետության հետ՝ եզրակացնելով «Սսի կաթողիկոսությունը Ադանայի կոտորածից հետո շուրջ 5 տարի անց միայն կարողացավ մասամբ ոտքի կանգնել և զարկ տալի բարենորոգչական ու շինարարական որոշ աշխատանքներին» (էջ 92):

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է «Կիլիկիո կաթողիկոսությունը Մեծ եղեռնի տարիներին և կաթողիկոսական աթոռի տեղափոխությունը Երուսաղեմ» և բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում «Կիլիկիայի հայ բնակչության բռնաճնշումները և տարագրությունը 1914-1915 թթ.՝ Սսի կաթողիկոսության գործունեության լույսի ներքո» անդրադառնում է կաթողիկոսության դիրքորոշմանը զորահավաքի և դասալքության նկատմամբ, հայության տարագրությունը և կաթողիկոսության դիմակայության դրսևորումները, աքսորի մանրամասները, բռնի կրոնափոխության դրսևորումները (էջ 93-118):

Երկրորդ ենթագլխում «Օսմանյան կառավարության 1916 թ. հուլիսի 19-ի «Կանոնագիր Հայոց կաթողիկոսութեան եւ պատրիարքութեան» օրինագիծը» (էջ 118-129) վերլուծում է նշված օրինագծի հիմնադրույթները, որն ըստ ատենախոսի՝ բարեբախտաբար, չեղարկվեց միայն 1918 թ. նոյեմբերի 20-ին (էջ 129):

Երրորդ ենթագլխում «Կիլիկիո Կաթողիկոս-պատրիարք Սահակ Բ Խապայանի պաշտոնավարման երուսաղեմյան շրջանը» (էջ 129-141) ներկայացնում է 1916 թ. հուլիսի 19-ի կանոնագրի գործադրման հանգամանքները, կաթողիկոս-պատրիարքական աթոռի հաստատումը Երուսաղեմում, հոգևոր ժողովի հրավիրումը, կաթողիկոս-պատրիարքության Դամասկոս տեղափոխվելու պատճառները:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է «Կիլիկիո կաթողիկոսական աթոռի դեգերումները 1917-1921 թթ.» և բաղկացած է 4 ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում «Կիլիկիո կաթողիկոսական աթոռի տեղափոխությունը Երուսաղեմից Դամասկոս 1917 թ. նոյեմբերի 6 - 1919 թ. գարուն» լուսաբանում է աթոռի դամասկոսյան շրջափուլի գործունեությունը և եկեղեցու խաղացած դերը արևմտահայ գաղթականների օգնության կազմակերպման գործում (էջ 141-154): Նշելի է, որ

ատենախոսը մասնավոր կերպով անդրադարձել է Մուդրոսի զինադադարի նշանակությանը Կիլիկիայի ճակատագրում:

Երկրորդ ենթագլխում «Հայ ազգաբնակչության վերադարձի կազմակերպումը Կիլիկիա և Կիլիկիո կաթողիկոսությունը» (էջ 154-161) վերլուծում է նշված հարցում Սահակ Բ Խապայանի Կիլիկիա տեղափոխվելու խոչընդոտները:

Երրորդ ենթագլխում «Ազգային վերաշինության գործընթացը Կիլիկիայում և եկեղեցու դերակատարումը» (էջ 161-170) ներկայացնում է գաղթականների տեղավորումը, քաղաքային կյանքի կազմակերպումը, ազգային կալվածների մատակարարումը, ընտանեկան և ժառանգական իրավական բնույթի խնդիրների պաշտոնականացումը, ինչպես նաև կրթամշակութային գործունեության հսկողությունը, որոնց հանրագումարի արդյունքում կաթողիկոսությունը կարծես կրկին դառնում է ազգային-կրոնական մի հաստատություն:

Չորրորդ ենթագլխում՝ «Իրադրությունը Կիլիկիայում սկզբնական 1919 թ. վերջերին և 1920 թ. սկզբներին: Սահակ Բ Խապայանի ուղևորությունը Ֆրանսիա, Իտալիա և Մեծ Բրիտանիա)» (էջ 170-187) ատենախոսը քննարկում է նշված ուղևորության արդյունքները՝ գրելով, որ «Սահակ Բ Խապայանը հինգերորդ կաթողիկոսն էր, որ հայկական հարցի քննարկման համար հասնում էր Եվրոպա»:

Եզրակացությունների բաժնում (էջ 188-195) հանրագումարի է բերել ատենախոսության հիմնական եզրահանգումները:

Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկը ներկայացված է էջ 196-219:

Ատենախոսության մեջ տեղ են գտել որոշ թերություններ և բացթողումներ, որոնց հարկ ենք համարում անդրադառնալ.

- էջ 23-26-ում՝ «պատմական ակնարկը» բաժնին մեծ տեղ է հատկացված,
- էջ 216-ում՝ գիտական հոդվածներ և ժողովածուներ բաժնում, ներառել է Յուշամատեան Սուրիահայ օգնութեան խաչի 1919-2009, խմբագիր Անի Ֆիշենկճեան, Հալէպ, 2010, 440 էջ, մինչդեռ այն պետք է գրվեր Հուշեր բաժնում,
- էջ 47-48՝ մեջբերումները երկար են,
- էջ 53-62-ում կոտորածների նկարագրություն է,

- Եզրակացության 12-14-րդ կետերը փաստերի թվարկում է, իսկ Հավելվածի 2, 3, 4 և 5 բաժինները խնդրո առարկա դարձած թեմայի ժամանակաշրջանին չեն վերաբերում:

Հարկ է նշել, որ նշված թերություններն ու բացթողումներն էականորեն չեն ազդել ատենախոսության ընդհանուր որակի վրա: Ատենախոսը փաստական հարուստ նյութի և գրականության հիման վրա գրել է կուռ կառուցվածքով մնայուն աշխատանք: Այն բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները, որի արդյունքում ատենախոսն էլ արժանի է ստանալու իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
«Հայ գաղթօջախների և սփյուռքի պատմության»
բաժնի վարիչ պ. գ. դ., պրոֆեսոր Գ. Ստեփանյան
24.05.2022

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ Հ. Ղ. Մուրադյան
24.05.2022